Արձանագրություն N 4

<<ԾՔ-ԳՀԱՊՁԲ-19/38>> ծածկագրով ԳՀ ընթացակարգով հայտարարված Ծաղկաձոր համայնքի կարիքների համար օրացույցների, թղթապանակների և թղթյա տոպրակների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

06 դեկտեմբեր 2019թ.

ք.Ծաղկաձոր

ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի

նախագահ՝ Ն.Խաչատրյան

անդամներ՝ Զ.Բաբախանյան

Վ.Հայրապետյան

քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման մասին

(Ն.Խաչատրյան)

Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Սահմանված ժամկետում **<<ԾՔ-ԳՀԱՊՁԲ-19/38>> ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցները՝ <<Մռավ Պրինտ>> ՍՊԸ-ն և <<ՄԱՔՍ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ-ն** ներկայացրել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին:

1.2 Համաձայն ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրած տեղեկատվության՝ **<<ՄԱՔՍ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ-ն** հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 7000 (յոթ հազար) ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է իր գնային առաջարկի 1 տոկոսը /եզրակացությունը կցվում է / :

<<Մռավ Պրինտ>> ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

1.3 Հանձնաժողովը որոշեց.

<<ԾՔ-ԳՀԱՊՁԲ-19/38>> ծածկագրով ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել՝ **<<Մռավ Պրինտ>> ՍՊԸ** -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

2. Նիստը կասեցնելու մասին

(Ն.Խաչատրյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 48-րդ կետի պահանջները՝ հանձնաժողովը որոշեց երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը և էլեկտրոնային եղանակով ծանուցել <<**ՄԱՔՍ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ** -ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը՝ պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելով կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հաստատման մասին

(Ն.Խաչատրյան)

3.1 **<<ԾՔ-ԳՀԱՊՁԲ-19/38>> ծածկագրով ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով** ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

3.2 Հաստատել **ԾՔ-ԳՀԱՊՁԲ-19/38** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

4 Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին

(Ն.Խաչատրյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել մասնակցի կողմից սույն արձանագրության 2-րդ կետում նշված փաստաթղթի ստացման օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

Հանձնաժողովի նիստին ներկա անդամի անունը,ազգանունը	**Ստորագրությունը**
Նախագահ՝ Ն.Խաչատրյան	
Անդամներ՝ Զ.Բաբախանյան	
Վ.Հայրապետյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	